**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 մարտի 2026 թվականի N 1068

## «ԳՐԻՆ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի 11-րդ կետի, 24-րդ կետի 3-րդ, 4-րդ և 10-րդ ենթակետերի, Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի օգոստոսի 13-ի N 111-Ն որոշման, հաշվի առնելով Կոտայքի մարզպետի 2026 թվականի փետրվարի 25-ի N 01/03.1/01625-2026 գրությամբ (մուտք՝ 2026 թվականի փետրվարի 25-ի N Պ-589) տրամադրված լիազոր մարմնի համաձայնությունը և հիմք ընդունելով «ԳՐԻՆ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի դիմումը (մուտք՝ 2026 թվականի հունվարի 19-ի N Տ-227).

1. «ԳՐԻՆ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող (հիմք՝ 2023 թվականի օգոստոսի 17-ի N 17082023-07-0093 վկայական) Աբովյան համայնքի Առինջ գյուղի Խ. Աբովյան թաղամասի 8-րդ փողոցի 2 հասցեում գտնվող 07-011-0358-0116 կադաստրային ծածկագրով 0.2015 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի կառուցապատման կարգավորիչները փոփոխել բարձրահարկ բնակելի կառուցապատման գոտու կառուցապատման կարգավորիչների՝ ԲՆԿԳ-4 (10 վերգետնյա հարկ):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Աբովյան համայնքի ավագանու կողմից հաստատվելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2026թ. մարտի 04
ք. Աբովյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

## Ն Ա Խ Ա Գ Ա Հ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

N

ՀՀ Կոտայքի մարզպետ
պարոն Աիարոն ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

2026 թվականի փետրվարի 5-ի
N 01/03.1/00989-2026 գրություն

Հարգելի պարոն Սահակյան

ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Առինջ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 07-011-0358-0116 կադաստրային ծածկագրով 0.2015 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողում 10-հարկանի բնակելի շենք կառուցելու համար ՀՀ Կոտայքի մարզի Կոտայք-2 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերում ներառված Առինջ բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծի գոտևորման նախագծում հարկայնության փոփոխություն կատարելու՝ ԲՆԿԳ-1/1-ից ԲՆԿԳ-4 սահմանելու (10 հարկ վերգետնյա) վերաբերյալ հայտնում եմ, որ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 11-րդ կետը և 24-րդ կետի 10-րդ ենթակետը՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն առարկություններ չունի:

Քաղաքաշինական հարցերի շուրջ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն իր կարծիքը կհայտնի նախագիծը պետական համալիր փորձաքննության ներկայացնելու ժամանակ:

Ձեզ եմ տրամադրում շահագրգիռ մարմինների կողմից ներկայացված կարծիքների և դիտողությունների ամփոփ տեղեկանքը:

Միաժամանակ տեղեկացնում եմ.

1. կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան՝ մասնավորապես ապահովելով ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

2. Աբովյան համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի (Առինջ բնակավայրի) ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

3. Անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի (Առինջ բնակավայրը) հաստատված գոտևորման նախագծում սույն գրությունից բխող փոփոխությունները:

Առդիր՝ 1 ֆայլ:

Հարգանքով՝

2/23/2026

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133 Եղիազար ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ
Լևոն Առաքելյան, հեռախոս՝ 011 621 725,
Կատարող Լիլիթ Գևորգյան, հեռախոս՝ 011 621 715